ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

07.08.2023
351-37

Էկոնոմիկայի նախարար
Վահան Քերոբյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քերոբյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2021, 2022 և 2023 թվականներին «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով հսկվող ապրանքների արտահանման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման քանի՞ մեկանգամյա թույլտվություն է տրամադրվել՝ ըստ տարիների:
2. 2021, 2022 և 2023 թվականներին հսկվող ապրանքների արտահանման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման քանի՞ անհատական թույլտվություն է տրամադրվել՝ ըստ տարիների:
3. 2021, 2022 և 2023 թվականներին հսկվող ապրանքների արտահանման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման քանի՞ ընդհանուր թույլտվություն է տրամադրվել՝ ըստ տարիների:
4. 2021, 2022 և 2023 թվականներին ՀՀ տարածքով հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման՝ վերոնշյալ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված քանի՞ ծանուցում է ստացվել՝ ըստ տարիների:
5. 2022 թվականի հունվարի 1-ից մինչ օրս քանի՞ դեպքում է արգելվել հսկվող ապրանքների արտահանումը, ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրումը և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան